ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՎԵՐԱՀՍԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

Ձեռնարկի նպատակն է բարձրացնել ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, թեկնածուների իրազեկվածության մակարդակը նախընտրական քարոզչության ֆինանսավորման և դրա նկատմամբ վերահսկողության բնագավառում և նպաստել ընտրական գործընթացի նշված փուլը կարգավորող իրավանորմերի պատշաճ կիրարկմանը:

Սույն ձեռնարկը կազմվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա, սակայն այն չի կարող համարվել ՀՀ ընտրական օրենսգրքին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին փոխարինող փաստաթուղթ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ: ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ՝

- **Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները).**
- **Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները).**
- **10.000 և ավելի ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուները.**
- **Մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն, եթե զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործելու է կամ արդեն օգտագործել է նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումար:**

Նախընտրական հիմնադրամ բացելու պարտավորությունը ծագում է ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը, համայնքի ղեկավարի թեկնածուին գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում:

Նախընտրական առանձին հիմնադրամ ձևավորել չեն կարող՝

- **կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները.**
- **Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուները.**
- **Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուները:**

Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են

Երևանում և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղեր ունեցող առևտրային բանկերից որևէ մեկում:

Այդ բանկերն են՝

- ***«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ.***
- ***«Արդշինինբանկ» ՓԲԸ.***
- ***«Հայէկոնամբանկ» ԲԲԸ.***
- ***«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ.***
- ***«Յունիբանկ» ԲԲԸ:***

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների դիմումների հիման վրա կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների լիազոր ներկայացուցիչների, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների դիմումների դեպքում՝ թեկնածուների կամ նրանց լիազոր ներկայացուցիչների անվամբ բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ: Այդ հաշվեհամարի բացման համար դիմումատուի և բանկի միջև կնքվում է բանկային հաշվի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ժամանակավոր հատուկ հաշվեհամարներից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում:

ՀՀ ընտրական օրենսգիրք, 26-րդ հոդված
ՀՀ ԿԸՀ 09.11.2016թ. N 125-Ն որոշում

Նախընտրական հիմնադրամի միջոցների նկատմամբ չի կարող կիրառվել արգելանք, այդ միջոցները չեն կարող հանդիսանալ բռնագանձման առարկա՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության հետ չկապված անձնական բնույթի պարտավորություններով:

ՀՀ ընտրական օրենսգիրք, 26-րդ հոդված


ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի հիմնադրամ
Ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի հիմնադրամ
թեկնածուի անձնական միջոցներ
թեկնածուին առաջադրած կուսակցության տրամադրած միջոցներ
ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի դեպքում՝ դաշինքի անդամ կուսակցությունների միջոցներ
ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից տրամադրած միջոցներ
ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի անձնական միջոցներ

Հնշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամների հաշվին մուծված գումարները, ինչպես նաև նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափերը գերազանցող մասերը փոխանցվում են պետական բյուջե:

Պետական բյուջե են փոխանցվում նաև նախընտրական հիմնադրամների հաշվին կատարված անանուն մուծումները:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ

Ընտրական օրենսգրքով և սույն ուղեցույցով, որպես նվազագույն աշխատավարձ հաշվարկային հիմք ընդունվում է 1000 դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	*Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը*	*Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը*
1.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը	**Նվազագույն աշխատավարձի 100.000-ապատիկը**
2.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին	**Նվազագույն աշխատավարձի 100.000-ապատիկը**
3.	Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկը**
4.	**Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ**	**Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը**

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը	Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը
1.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը	**Նվազագույն աշխատավարձի 10.000-ապատիկը**
2.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին	**Նվազագույն աշխատավարձի 10.000-ապատիկը**
3.	Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկը**
4.	**Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ**	**Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը**

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը	Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը
1.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունը	**Նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկը**
2.	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին	**Նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկը**
3.	Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը**
4.	**Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ**	**Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը**

ՄԻՆՉԵՎ 10.000 ԸՆՏՐՈՂ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	*Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը*	*Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը*
1.	Թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը**
2.	Թեկնածուին առաջադրած կուսակցությունը	**Նվազագույն աշխատավարձի 200-ապատիկը**
3.	**Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ**	**Նվազագույն աշխատավարձի 50-ապատիկը**

10.000 ԵՎ ԱՎԵԼԻ ԸՆՏՐՈՂ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	*Նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու իրավունք ունեցող սուբյեկտը*	*Նախընտրական հիմնադրամ մուծվող գումարի առավելագույն չափը*
1.	Թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը**
2.	Թեկնածուին առաջադրած կուսակցությունը	**Նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը**
3.	**Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ**	**Նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը**

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՌԱՆՁԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ:

Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները նախընտրական հիմնադրամի միջոցները կարող են օգտագործել նախընտրական քարոզչություն իրականացնելուն ուղղված ցանկացած միջոցառման ֆինանսավորման համար:

Միայն նախընտրական հիմնադրամի միջոցներով կարող են ձեռք բերվել (ֆինանսավորվել)՝

- *զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացումը.*
- *դահլիճների, տարածքների վարձակալումը.*
- *քարոզչական պաստառների պատրաստումը (տեղադրումը).*
- *քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերումը, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստումը:*

Միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համար կատարվող ծախսերի ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափերը

Հ/Հ	Թեկնածուներ	Առավելագույն չափ
1.	Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ	**Նվազագույն աշխատավարձի 500.000-ապատիկը**
2.	Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլին մասնակցող կուսակցություններ, կուսակցություն-ների դաշինքներ	**Նվազագույն աշխատավարձի 200.000-ապատիկը**
3.	Երևանի ավագանու ընտրություն-ներին մասնակցող կուսակցություն-ներ,կուսակցությունների դաշինքներ	**Նվազագույն աշխատավարձի 100.000-ապատիկը**
4.	Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններ, կուսակցու-թյունների դաշինքներ	**Նվազագույն աշխատավարձի 30.000-ապատիկը**
5.	Մինչև 4.000 ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկը**
6.	4.000-ից մինչև 10.000 ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 7.000-ապատիկը**
7.	10.000-ից մինչև 70.000 ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 15.000-ապատիկը**
8.	70.000-ից ավելի ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ղեկավարի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 25.000-ապատիկը**

9.	Մինչև 4.000 ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը**
10.	4.000-ից մինչև 10.000 ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկը**
11.	10.000-ից մինչև 70.000 ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկը**
12.	70.000-ից ավելի ընտրող ունեցող համանքի դեպքում՝ համայնքի ավագանու անդամի թեկնածուն	**Նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկը**

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ ***3 աշխատանքային օրը մեկ****, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:*

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք և այն տեղադրում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող
տեղեկանքի օրինակելի ձևը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

_____

Նշվում է ընտրության անվանումը (ԱԺ ընտրություններ կամ Երևանի ավագանու բառերը)

2017թ._____ ____ -ի ընտրություններին մասնակցող _____

Նշվում է կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը

ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի վերաբերյալ

հ/հ_____

Մուտքերի ժամանակագրությունը	Մուտքերի չափը	Ելքերի ժամանակագրությունը	Ելքերի չափը	Հիմնադրամի մնացորդը

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Ստորագրություն

օր, ամիս, տարեթիվ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են՝

Նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ **10-րդ օրը**

- Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ
- Ընտրություններին մասնակցող կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

Նախընտրական քարոզչությունն սկսելուց հետո՝ **20-րդ օրը**

- Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունները,կուսակցությունների դաշինքները հերթական ընտրությունների ժամանակ

Ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից **ոչ ուշ, քան 3 օր առաջ**

- Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ
- Ընտրություններին մասնակցող կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 3 ՕՐ ԱՌԱՋ:

Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները հայտարարագիր ներկայացնում են միայն.

- ***զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման,***
- ***դահլիճների, տարածքների վարձակալման,***
- ***քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման),***
- ***քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման,***
- ***ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի)***

պատրաստման համար կատարված ծախսերի վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-րդ մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են անհատույց կամ շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:

Հայտարարագրի թղթային տարբերակը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է կից գրությամբ, որին կից ներկայացվում են հայտարարագրում նշված ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերը (պայմանագիր, վճարման հանձնարարական և այլն):

Առաջարկվող օրինակելի ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կից ներկայացվում է _____
(նշվում է թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը)

_____ *նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը և կից փաստաթղթերը:*

Առդիր՝ ___ *թերթ:*

Թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի,
կուսակցության, կուսակցությունների դաշինքի
դեպքում նրանց լիազոր ներկայացուցչի

_____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

[նշվում է ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը]

Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապարվող բոլոր գործառնությունները <u>դադարեցվում են քվեարկության օրվանից:</u>

Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

(ՀՀ ընտրական օրենսգիրք 27-րդ հոդված, 7-8 մասեր)

<u>Առաջարկվող օրինակելի ձև</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

_____
(նշվում է ընտրության անվանումը)

_____
(թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի,
կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր
ներկայացուցչի
անուն, հայրանուն, ազգանունը)

ԴԻՄՈՒՄ

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ խնդրում եմ թույլատրել նախընտրական հիմնադրամից վճարումներ կատարել քվեարկության օրվանից հետո, մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

Կից ներկայացվում է մինչև քվեարկության օրը կատարված գործարքների պայմանագրերի պատճենները:

Առդիր՝ ___ թերթ:

Դիմող՝ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

[նշվում է ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը]

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄՆԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

Ընտրությունից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում, թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի հայեցողությամբ օգտագործվում են բարեգործական նպատակներով:

Եռամսյա ժամկետը լրանալուց հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Ընտրությունները չկայացած ճանաչվելու կամ ընտրություններն անվավեր ճանաչվելու և նոր հերթական կամ նոր ընտրություններ նշանակվելու դեպքերում նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները սառեցվում են մինչև նոր հերթական կամ նոր ընտրությունների համար թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը: Նոր հերթական կամ նոր ընտրությունների դեպքում թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները կարող են օգտագործել իրենց նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները:

Նոր հերթական կամ նոր ընտրություններին չմասնակցող թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները եռամսյա ժամկետում թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության հայեցողությամբ օգտագործվում են բարեգործական նպատակներով: Եռամսյա ժամկետը լրանալուց հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե:

Նշված դրույթները կիրառվում են նաև Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի ընթացքում:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1 Եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար սահմանված ուղղություններով մատուցված ապրանքը կամ ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ:

Եթե հարուցված վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ **կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով:**

2 Եթե հիմնավորվում է, որ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են սահմանված ուղղություններով կատարված ծախսերի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ, և եթե վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ **կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով:**

3

Եթե նախընտրական քարոզչության համար սահմանված ուղղություններով ծախսված գումարի և պետական բյուջե վճարվող տուգանքի գումարի չափի և նախընտրական հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առավելագույն չափի 20 տոկոսը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիմումի հիման վրա **դատարանն ուժը կորցրած է ճանաչում թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը**:

Սահմանված գումարները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումից հետո՝ 5-օրյա ժամկետում, պետական բյուջե չփոխանցելու կամ նույն ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով չբողոքարկելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված գումարը գանձում է դատական կարգով:

(ՀՀ ընտրական օրենսգիրք 27-րդ հոդված, 3-6 մասեր)

Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, կամ նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրա-պատիկի չափով:

(ՎԻՎ ՀՀ օրենսգիրք 40.3-րդ հոդված)

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ.նոյեմբերի 9-ի N 125-Ն որոշման

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման

_____ _____

ընտրության անվանում թեկնածուի անուն, հայրանուն, ազգանուն, կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում

_____--_____

հաշվետու ժամանակահատված

Մուտքեր			Ծախսեր					
Հիմնադրամի մուծումների ժամանակագրություն	Հիմնադրամ մուծված գումարի չափ (ՀՀ դրամ)		ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրություն	ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանում	Ծախսերի չափը (ՀՀ դրամ)		ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախ-սերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալներ	ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված, դեռ չվճարված դրա-մական պարտա-վորությունների չափը
					Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը	ԸՕ 27-րդ հոդվածի 1-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը		
1	2		3	4	5	6	7	8
Ընդամենը			Ընդամենը					

Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը	
Հիմնադրամից կատարված բոլոր ծախեսրի ընդհանուր չափը	

Հիմնադրամում մնացած գումարի չափ	

Հայտարարագիրը բաղկացած է _____ թերթից, կից պայմանագրերը, փաստաթղթերը՝ _____ թերթից:

_____

թեկնածուի ստորագրություն, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն, օր, ամիս,տարեթիվ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի ու ժամկետների

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը, թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը հայտարարագիրը ներկայացնում են **թղթային տարբերակով** և **էլեկտրոնային կրիչով**՝ Adobe Acrobat (*.pdf) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ:

Հայտարարագրի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով ***(www.elections.am):***

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարագրի՝

- ✓ «ընտրության անվանում» տողում լրացվում է այն ընտրության անվանումը, որին կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, թեկնածուն մասնակցում է.
- ✓ «կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանում, թեկնածուի անուն, հայրանուն, ազգանուն» տողում լրացվում է հայտարարագիրը ներկայացնող կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, թեկնածուի դեպքում՝ թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը.
- ✓ «հաշվետու ժամանակահատված» տողում լրացվում է այն ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հայտարարագիրը:
  - ! Որպես հաշվետու ժամանակահատվածի սկիզբ բոլոր հայտարարագրերում՝ լրացվում է կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի, թեկնածուի գրանցման օրը, ամիսը, տարեթիվը:
  - ! Առաջին 2 հայտարարագրերի դեպքում որպես հաշվետու

ժամանակահատվածի վերջ՝ լրացվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի համապատասխանաբար 10-րդ և 20-րդ օրերի օրը, ամիսը, տարեթիվը, իսկ վերջին հայտարարագրի դեպքում՝ քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը:

- ✓ Յուրաքանչյուր հաջորդ հայտարարագիր իր մեջ ներառում է նախորդ հայտարարագրերի տվյալները:

«Մուտքեր» մասի.

- ✓ «Հիմնադրամի մուծումների ժամանակագրություն 1» սյունակի յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են մուծումները,
- ✓ «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակում լրացվում է յուրաքանչյուր օրվա մուծումների ընդհանուր չափը՝ ՀՀ դրամով,
- ✓ «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակում նշված գումարների ընդհանուր չափը:

«Ծախսեր» մասի.

- ✓ «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրություն 3» սյունակի յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են ծախսերը, իսկ մինչև հիմնադրամի ձևավորումը ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դեպքում, լրացվում է «մինչև հիմնադրամի ձևավորում» բառերը կամ դրանց հապավումը՝ «ՄՀՁ»,
- ✓ «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանում 4» սյունակում ըստ օրերի առանձին տողերում լրացվում է զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի

նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման նպատակով ձեռք բերված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի անվանումը,

- «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման համար կատարած ծախսի փաստացի չափը: Այն դեպքերում երբ 4-րդ սյունակում նշված ապրանքը կամ ծառայությունը ձեռք է բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ինչպես նաև անվճար ստացման դեպքում, ծախսի փաստացի չափը նշվում է «0 (զրո)»,
- «ԸՕ 27-րդ հոդվածի 1-րդ մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը 6» սյունակում նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքը: Եթե «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում նշված գումարը համընկնում է հայտարարագրման ենթակա ձեռք բերված ապրանքի կան ծառայության շուկայական արժեքի հետ, ապա 6-րդ սյունակում նշվում է նույն թիվը: Մինչև հիմնադրամի ձևավորումը ստացված ապրանքների և ծառայությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ստացված հայտարարագրման ենթակա ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը 5-րդ սյունակում նշված թվից ավելի բարձր է, նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը,
- «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալներ 7» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալները (պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, վճարման անդորրագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը և այլն),

- «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը 8» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման մասով, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը՝ եթե այդպիսիք առկա են: Եթե հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման մասով վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորություններ առկա չեն, ապա նշվում է «0 (զրո)»,

- «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում նշված թվերերի ընդհանուր չափը և «ԸՕ 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը չափ 6» սյունակում նշված թվերերի ընդհանուր չափը:

- «Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը» տողում նշվում է հիմնադրամից կատարված, հայտարարագրման ոչ ենթակա, ուստիև հայտարարագրի մյուս տողերում չներառված, ծախսերի ընդհանուր չափը:

- «Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը» տողում նշվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակի «Ընդհամենը» տողի և «Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը» տողի թվերի գումարը:

- «Հիմնադրամում մնացած գումարի չափ» տողում լրացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջում հիմնադրամում մնացած չօգտագործված գումարի չափը, որը հավասար է «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակի ընդհամենը տողի և «Հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափ» տողի թվերի տարբերությանը:

- Հայտարարագրի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրի թերթերի և դրան կից պայմանագրերի, փաստաթղթերի թերթերի թվերը:

Հայտարարագիրը ստորագրում է կուսակացության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը, թեկնածուի դեպքում՝ թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը, լրացվում է հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը, լիազոր ներկայացուցչի ստորագրելու դեպքում լրացվում է նրա անունը, հայրանունը, ազգանունը: